ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի թիվ 09 հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Փամբակ	Ավագանու հերթական նիստ	11.09.2025թ.	14:00	**Փամբակի** համայնքապետարան ավագանու նստավայր (գ. Փամբակ, 1 փող. 23)

ՕՐԱԿԱՐԳ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11.09.2025Թ. ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 09 ՆԻՍՏԻ

«11» Սեպտեմբերի 2025թ. ժամը՝ 14.00

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի սեպտեմբերի 11-ի թիվ 09 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

3. «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Գագիկ Ալեքսանդրի Ավագյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի ու մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025Թ-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 09 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի դրույթներով, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի սեպտեմբերի 11-ի թիվ 09 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի սեպտեմբերի 11-ի թիվ 09 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:
3. «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:
4. «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Գագիկ Ալեքսանդրի Ավագյանին օտարելու մասին:
6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի ու մրցույթի պայմանները հաստատելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ռ. Մինասյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի N -Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետերով, «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով «Զով-Գուժ» ՍՊԸ-ի 09.07.2025թ-ի գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 13.08.2025թ-ին անցկացված հանրային լսումների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը և տեսաձայնագրությունը, Փամբակ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն /կամ անհամաձայնություն/ «Զով-Գուժ» ՍՊԸ-ի կողմից Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ նախատեսվող գործունեության իրականացմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի N -Ա

«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը) ենթակետով, հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ.«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ ՆԼ-640 լեռնահատկացման ակտը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնք գյուղ Քարաբերդ 06-108-0105-0009 կադաստրային ծածկագրում գտնվող 4.0369 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, մինչև 03.09.2050թ-ը, առանց մրցույթի «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 810000/ութ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /հող./ 2.3- 7 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի N -Ա

«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 44-րդ կետի ը ենթակետով, հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ.«Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ NԼ-640 լեռնահատկացման ակտը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնք գյուղ Քարաբերդ 06-108-0105-0011 կադաստրային ծածկագրում գտնվող 1.63421 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, մինչև 03.09.2050թ-ը, առանց մրցույթի «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրելուն:

2. Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 330000 /երեք հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /հող./ 2.3- 7 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի N -Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածով, ՀՀ կառավարություն 26.05.2016 N 550-Ն որոշմամբ, հաշվի առնելով Գագիկ Ալեքսանդրի Ավագյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Գագիկ Ալեքսանդրի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնք գյուղ Մարգահովիտ 06-070-0002-0002 կադաստրային ծածկագրով 0,1 հա հողամասին կից գտնվող 06-070-0248-0003 կադաստրային ծածկագրով 0,04973 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով Գագիկ Ալեքսանդրի Ավագյանին օտարելուն:

2. Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 379606 (երեք հարյուր յոթանասունինը հազար վեց հարյուր վեց) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /հող./ 2.3- 7 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի N -Ա

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ, ԱՃՈՒՐԴԻ ՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքով, ՀՀ կառավարության 12.04.2001 թ-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն:

2. Վարձակալության իրավունքով, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, 25 տարի ժամկետներով տրամադրվում են հողամասեր.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայրի 06-070-0001-0006 ծածկագրով 1.01399 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 3-րդ կարգի խոտհարք: Հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:
Վարձակալության լոտի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

3. Կառուցապատման իրավունքով, 99 տարի ժամկետով տրամադրվում է.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի 06-019-0107-0377 կադաստրային ծածկագրով 1,63564 հա հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության, հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամաս: Հողամասի տարեկան կառուցապատման վճարի մեկնարկային գինը սահմանել 85000 /ութանասունհինգ հազար/ ՀՀ դրամ:
Կառուցապատման մրցույթի մասնակցության վճարը սահմանել 5000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Գլխավոր մասնագետ /հող./ 2.3- 7 Է. Բաղդասարյանը

ՆԱԽԱԳԻԾ

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2025 թվականի Ն -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Փամբակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրը և ժամը սահմանել 2025 թվականի հոկտեմբերի 14-ին, ժամը 14:00-ին:

2. Նիստը կազմակերպել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ. Փամբակ, 1-ին փողոց, 23 շենք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Ռ. Մինասյանը